



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. չորրորդ եռամսյակում /վերլուծություն/

2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 47051 գործարքներ, որոնց քանակը 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 14.1%-ով, իսկ 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 37.0%-ով:

2007թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 17810 օտարման գործարքների 86.3% կազմել են առուվաճառքները, 12.8%՝ նվիրատվությունները և 0.9%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35.3% արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված

անշարժ գույքի 32.1% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2007թ. չորրորդ եռամսյակում, 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 11.4%-ով, իսկ 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 19.6%-ով:

2007թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 56.2% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 4.7%-ով, իսկ 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 3.5%-ով:

2007թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

<i>Համայնքներ</i>	<i>Միջին գները /դրամ/</i>		
	<i>չորրորդ եռամսյակ 2006թ.</i>	<i>չորրորդ եռամսյակ 2007թ.</i>	<i>երրորդ եռամսյակ 2007թ.</i>
Կենտրոն	400700	470900	455100
Արաբկիր	319600	377700	376800
Քանաքեռ-Զեյթուն	213700	291900	280300
Նոր-Նորք	187800	250100	235700
Ավան	177500	250100	230300
Էրեբունի	187100	249700	236500
Շենգավիթ	200000	261700	252100
Դավթաշեն	208500	275300	259100
Աջափնյակ	189900	257700	245800
Մալաթիա-Սեբաստիա	179800	250400	232200
Նուբարաշեն	115900	136400	126700
<i>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</i>	<i>216400</i>	<i>279300</i>	<i>266400</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են 4.8%-ով:

2007թ. չորրորդ եռամսյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. չորրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1615 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 1.4%-ով, իսկ 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 2.7%-ով:

2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում

առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		չորրորդ եռամսյակ 2006թ.	չորրորդ եռամսյակ 2007թ.	երրորդ եռամսյակ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	80100	111500	110100
	Ապարան	27100	30700	28700
	Թալին	29100	40300	38100
Արարատ	Արտաշատ	63400	90000	88000
	Մասիս	73600	112100	100300
	Վեդի	49800	71300	62700
Արարատ	Արարատ	49800	58000	57700
	Վաղարշապատ	102100	143800	130700
	Արմավիր	70400	107500	97200
Գեղարքունիք	Մեծամոր	46100	67200	62200
	Սևան	46900	73500	65600
	Գավառ	30200	39400	36100
	Մարտունի	42500	59100	53600
	Վարդենիս	23400	28300	26300
Լոռի	Ճամբարակ	13900	15500	15100
	Վանաձոր	59000	78900	75300
	Ստեփանավան	28700	42200	39300
	Սպիտակ	40300	54900	46700
	Ալավերդի	22900	27600	26400
	Տաշիր	21900	28600	26200
	Թումանյան	5400	5500	5400
	Շամլուղ	3000	3200	3000
Կոտայք	Ախթալա	10900	12500	11700
	Աբովյան	118200	153000	150000
	Նոր Հաճն	80400	112400	105900
	Բյուրեղավան	57700	82400	76400
	Եղվարդ	73100	104400	94500
	Հրազդան	42500	57800	53800
	Ծաղկաձոր	80600	109900	100900
Շիրակ	Չարենցավան	50800	71800	64900
	Գյումրի	57500	81800	74000
	Արթիկ	37500	48700	47000
	Մարալիկ	23400	25800	25700
	Գորիս	56700	82300	75100
	Կապան	54900	73000	69900
Սյունիք	Սիսիան	46900	58600	54300
	Մեղրի	34700	42600	39600
	Ագարակ	22300	27300	25300
	Քաջարան	29200	39500	34400
	Դաստակերտ	6800	7000	6900
	Վայք	51100	68300	62900
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	63400	86700	79000
	Ջերմուկ	82200	114900	111700
	Դիլիջան	56500	76800	71100
Տավուշ	Իջևան	69300	102000	93500

	Բերդ	31600	36200	34200
	Նոյեմբերյան	24900	29000	28500
	Այրում	18000	21000	20800

2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են 7.4%-ով:

2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն կայունացման միտում:

2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2055 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 570, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1485: 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 18.1%-ով, ընդ որում Երևանում՝ 22.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 16.6%-ով: 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 32.7%-ով, ընդ որում Երևանում՝ 72.2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 21.9%-ով:

2007թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

<i>Համայնքներ</i>	<i>Միջին գները /դրամ/</i>		
	<i>չորրորդ եռամսյակ 2006թ.</i>	<i>չորրորդ եռամսյակ 2007թ.</i>	<i>երրորդ եռամսյակ 2007թ.</i>
Կենտրոն	402800	476500	471400
Արաբկիր	322000	391000	387700
Քանաքեռ-Զեյթուն	215600	296000	284400
Նորք-Մարաշ	194500	248400	239000
Ավան	179800	254100	235100
Էրեբունի	188800	253600	239900
Շենգավիթ	201600	264500	256600
Դավթաշեն	210300	279800	263300
Աջափնյակ	191900	262000	250300
Մալաթիա-Մեքաստիա	181800	254400	235900
Նուբարաշեն	117800	138100	129900
<i>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</i>	<i>218800</i>	<i>283500</i>	<i>272100</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. չորրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են 4.2 %-ով:

2007թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների

պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		չորրորդ եռամսյակ 2006թ.	չորրորդ եռամսյակ 2007թ.	երրորդ եռամսյակ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	81400	116300	113500
	Ապարան	28300	33700	33300
	Թային	30100	43000	41100
Արարատ	Արտաշատ	65000	95700	91600
	Մասիս	74800	115000	102800
	Վեդի	51300	72900	65200
Արարատ	Արարատ	51200	63200	62100
	Վաղարշապատ	103400	145800	134600
	Արմավիր	71500	109900	99000
Գեղարքունի ք	Սևան	48200	74900	67700
	Գավառ	31600	41300	39700
	Մարտունի	43700	60700	56000
	Վարդենիս	24800	30900	30500
	Ճամբարակ	15000	18800	18400
Լոռի	Վանաձոր	60700	84600	79600
	Ստեփանավան	30000	46100	41600
	Սպիտակ	41600	56600	50100
	Ալավերդի	24200	30100	29900
	Տաշիր	23200	30200	28600
	Թումանյան	7200	8800	8500
	Շամլուղ	4600	5800	5700
Ախթալա	Ախթալա	12500	15100	14900
	Արովյան	119600	159100	154800
	Նոր Հաճն	81800	116700	110600
	Բյուրեղավան	58800	84000	79000
	Եղվարդ	74400	107600	97600
	Հրազդան	43700	61400	56900
	Ծաղկաձոր	85100	171800	144700
Կոտայք	Չարենցավան	52000	73800	67600
	Գյումրի	58800	87100	78600
	Արթիկ	38700	51100	49400
	Մարալիկ	24800	29000	28700
	Գորիս	58000	84700	78900
	Կապան	56200	77000	72600
Սյունիք	Սիսիան	48400	61000	57200
	Մեղրի	36200	45200	41800
	Ագարակ	23600	28900	27200
	Դաստակերտ	8900	9800	9700
	Վայոց Ձոր	52500	70200	64600

	Եղեգնաձոր	65000	89600	81800
	Ջերմուկ	40600	64100	58300
Տավուշ	Դիլիջան	57600	81100	74100
	Իջևան	70400	104200	96400
	Բերդ	32700	38900	37200
	Նոյեմբերյան	26100	34600	32100
	Այրում	19200	22800	22000

2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են 7.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 7262 միավոր /4563.98 հա/ հողեր, որից Երևանում՝ 635 միավոր /87.13 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 266 միավոր /26.88 հա/ հողեր, որից Երևանում՝ 127 միավոր /15.12 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3105 միավոր /4091.81 հա/, որից Երևանում՝ 30 միավոր /6.82 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 2661 միավոր /239.18 հա/, որից Երևանում՝ 428 միավոր /40.38 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1319 միավոր /119.10 հա/, որից Երևանում՝ 167 միավոր /38.48 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 99 միավոր /54.65 հա/, որից Երևանում՝ 10 միավոր /1.44 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 69 միավոր /57.59 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 8 միավոր /0.64 հա/,
- անտառային հողեր՝ 1 միավոր վարձակալության իրավունքի վաճառք /1.00 հա/:

2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 6879 միավորի /4377.62 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 601 միավոր /81.38 հա/, նվիրատվության գործարքներ՝ 350 միավորի /180.43 հա/, որից Երևանում՝ 24 միավոր /4.11 հա/ և փոխանակության գործարքներ՝ 33 միավորի /5.92 հա/, որից Երևանում՝ 10 միավոր /1.64 հա/:

Հանրապետությունում 2007թ. չորրորդ եռամսյակում, 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 19.7%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 12.3%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 25.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 38.6%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1237.38 հա, որից 1200.52 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 37.9% կամ 2605 գործարքներ /2321.57 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 197 գործարքներ /31.78 հա/, իսկ 61.5% կամ 4234 միավորը /2040.68 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 389 միավոր /49.38 հա/: 2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 40 գործարք /15.37 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2007թ. չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Չետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	9	1.43	119	10.51	69	19.84	26	5.15	1	0.02	285	28.11	77	16.11
Արագածոտն	155	428.91	0	0.00	13	2.37	78	6.41	216	271.21	0	0.00	190	17.94	8	0.92
Արարատ	97	194.50	12	6.48	124	10.69	154	5.07	273	140.51	3	11.12	281	24.97	14	2.15
Արմավիր	144	555.33	12	1.76	21	1.24	102	2.68	511	645.20	4	0.36	446	30.17	42	0.65
Գեղարքունիք	53	116.00	2	0.50	72	4.80	61	8.21	83	81.62	1	0.004	49	6.40	13	0.75
Լոռի	15	14.00	6	0.72	15	1.30	39	0.86	130	88.35	1	0.01	39	3.48	13	0.41
Կոտայք	306	480.67	10	2.62	75	6.84	240	23.79	480	260.14	4	0.53	509	47.49	55	4.81
Շիրակ	13	13.41	18	2.24	76	9.67	54	2.93	65	101.82	1	0.002	27	2.71	14	2.01
Սյունիք	20	56.38	4	5.73	8	0.50	90	0.74	90	86.64	3	20.00	19	1.85	14	1.40
Վայոց Ձոր	70	202.69	2	0.65	4	0.24	73	2.76	26	22.81	0	0.00	17	1.89	12	0.89
Տավուշ	21	83.27	3	0.05	64	5.76	54	7.13	108	75.39	1	0.01	46	4.87	2	3.30
Ընդամենը	894	2145.16	78	22.18	591	53.92	1014	80.42	2008	1778.84	19	32.06	1908	169.88	264	33.40

Ստորև ներկայացվում է 2007թ. չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Ուղղակի վաճառք</i>								<i>Աճուրդ վաճառք</i>									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	77	10.16	8	1.30	17	2.24	52	6.62	120	21.62	0	0.00	1	0.13	102	8.27	17	13.22
Արագածոտն	5	0.03	0	0.00	0	0.00	5	0.03	238	392.66	152	383.91	0	0.00	13	2.37	73	6.38
Արարատ	40	0.60	1	0.35	3	0.02	36	0.23	347	216.14	97	194.50	11	6.13	121	10.67	118	4.84
Արմավիր	27	0.75	2	0.26	8	0.30	17	0.19	250	559.89	142	554.95	10	1.50	13	0.94	85	2.50
Գեղարքունիք	9	0.27	0	0.00	0	0.00	9	0.27	179	129.24	53	116.00	2	0.50	72	4.80	52	7.94

Լոռի	7	0.14	1	0.01	2	0.09	4	0.04	68	16.74	15	14.00	5	0.71	13	1.21	35	0.82
Կոտայք	39	3.62	2	0.93	3	0.22	34	2.47	590	510.10	304	480.47	8	1.69	72	6.62	206	21.32
Շիրակ	22	1.45	1	0.11	8	0.27	13	1.07	139	26.80	13	13.41	17	2.13	68	9.40	41	1.86
Սյունիք	2	0.12	0	0.00	1	0.12	1	0.001	119	62.17	19	55.32	4	5.73	7	0.38	89	0.74
Վայոց Ձոր	7	1.11	1	0.55	0	0.00	6	0.56	142	205.23	70	202.69	1	0.10	4	0.24	67	2.20
Տավուշ	26	0.82	1	0.002	11	0.69	14	0.13	115	95.31	20	83.20	2	0.04	53	5.07	40	7.00
Ընդամենը	261	19.07	17	3.51	53	3.95	191	11.61	2307	2235.90	885	2098.45	61	18.66	538	49.97	823	68.82

Հանրապետությունում 2007թ. չորրորդ եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 9 գործարքներ /46.71 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. չորրորդ եռամսյակում, 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 11.3%-ով: Ընդ որում Երևանում աճել է 8.0 անգամ, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 6.3%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 1.3%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 1.1%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 33.8%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 2.3 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. չորրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	99	201.99	37.5	907.1	201.4	155	170.67	362.2	6772.5	2879.9
Ապարան	16	86.14	38.8	1036.3	359.1	14	13.18	90.6	767.6	386.9
Թալին	37	95.78	34.2	192.0	58.2	41	80.96	90.6	758.5	413.5
Ծաղկահովիտ						5	6.02	77.0	948.2	180.7
Արարատի մարզ										
Արտաշատ	42	115.75	29.8	2333.9	463.9	115	41.20	335.1	5418.0	1536.3
Մասիս	27	42.15	32.6	6212.5	581.0	56	42.12	181.1	6772.5	1963.9
Վեդի	28	36.59	20.0	1540.0	624.7	94	50.05	203.8	4515.0	1332.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	57	135.72	12.3	2352.0	834.5	152	141.30	294.3	4063.5	985.2
Բաղրամյան	51	368.98	20.3	802.5	195.2	64	341.73	90.6	677.3	605.8
Վաղարշապատ	34	50.25	19.2	1235.3	396.5	286	157.56	443.7	9030.0	1696.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						30	17.40	190.2	496.7	381.3
Ճամբարակ	23	15.33	108.0	1450.0	477.3	19	13.28	45.3	541.8	158.8
Մարտունի						2	0.38	45.3	1806.0	480.0
Սևան	23	82.86	104.3	3515.4	1018.0	9	14.09	45.3	451.5	204.0
Վարդենիս	7	17.81	187.0	636.4	441.7	23	36.47	27.2	532.8	262.1
Լոռու մարզ										
Ալավերդի	6	7.45	232.0	3883.3	1814.6	57	11.13	163.0	2483.3	1127.9
Գուգարք	1	1.99	501.7	501.7	501.7	16	14.49	226.4	2709.0	964.8

Սպիտակ	1	0.10	710.0	710.0	710.0	6	2.07	226.4	1490.0	528.6
Ստեփանավան	7	4.46	25.7	1192.1	608.3	25	20.93	90.6	2257.5	382.6
Տաշիր						25	38.72	45.3	451.5	213.4
Կոտայքի մարզ										
Արուսյան	122	221.67	11.8	5680.0	420.1	226	79.29	271.7	11287.5	3600.0
Եղվարդ	98	162.39	35.0	3748.7	387.4	216	148.30	172.1	11287.5	2526.6
Հրազդան	84	96.40	29.0	76923.1	1456.2	36	28.38	113.2	2709.0	1004.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	1.50	142.0	142.0	142.0	27	24.55	249.0	1693.1	465.2
Ամասիա	1	1.49	59.1	59.1	59.1	3	7.96	36.2	237.0	118.8
Անի						26	59.72	108.7	361.2	255.1
Աշոցք						3	3.60	45.3	165.0	117.9
Արթիկ	11	10.42	47.3	355.8	145.8	6	5.99	63.4	1083.6	179.7
Սյունիքի մարզ										
Գորիս						14	14.71	90.6	673.3	350.6
Կապան	10	36.07	18.4	639.0	129.5	6	7.21	54.3	841.6	234.2
Մեղրի	2	15.40	36.8	900.0	468.4	47	24.58	181.1	1784.2	509.1
Միսիան	7	3.85	260.0	550.0	423.8	23	40.15	45.3	631.2	242.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	37	59.43	34.4	674.7	165.5	25	20.85	117.7	2524.8	1320.3
Վայք	33	143.26	40.9	236.5	110.3	1	1.96	54.3	1430.7	521.3
Տավուշի մարզ										
Բերդ	8	71.53	217.1	750.0	479.1	48	46.83	45.3	841.6	365.7
Իջևան	9	11.09	275.0	5857.7	1716.8	11	3.42	240.0	1683.2	833.1
Նոյեմբերյան	3	0.58	703.3	1298.0	1050.4	45	24.66	45.3	3509.5	553.3

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. չորրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0թմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 թմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0թմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/				
	Միավորների քանակը	Մակերեսը /թմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 թմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /թմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0թմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	3770.0	175.7	179.0	177.4	173	157830.7	113.2	3612.0	2354.3
Ապարան	2	2390.0	105.5	249.8	177.7	8	10860.0	113.2	632.1	203.6
Թալին	8	17519.0	49.0	75.7	63.9	4	5801.0	45.3	361.2	99.9
Ծաղկահովիտ						1	1280.0	45.3	361.2	69.8
Արարատի մարզ										
Արտաշատ	50	50540.0	115.3	415.0	245.5	60	66106.0	135.8	2709.0	905.0
Մասիս	65	52791.0	289.0	1608.9	787.0	161	123360.0	135.8	9030.0	1177.7
Վեդի	6	3404.0	413.3	855.8	656.9	55	57332.0	113.2	993.3	655.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	1125.0	1980.0	1980.0	1980.0	68	62992.0	135.8	2257.5	1137.0
Բաղրամյան						9	11430.0	81.5	270.9	138.1
Վաղարշապատ	12	8275.0	687.5	3828.0	2781.9	366	223295.0	135.8	4515.0	1489.6

Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	1000.0	115.0	115.0	115.0	5	5020.0	135.8	903.0	362.2
Ճամբարակ	2	735.0	106.7	120.0	113.3	1	1000.0	45.3	135.5	99.8
Մարտունի	63	34579.0	79.9	113.6	112.9	27	32770.0	90.6	451.5	249.1
Սևան	6	11700.0	188.1	188.1	188.1	8	8813.0	90.6	903.0	158.8
Վարդենիս						8	16364.0	45.3	225.8	115.2
Լոռու մարզ										
Ալավերդի						8	7001.0	67.9	270.9	131.8
Գուգարք	7	5923.0	710.0	5218.5	4080.7	18	15132.0	67.9	2347.8	563.7
Սպիտակ	2	2300.0	92.0	94.6	93.3	4	4760.0	63.4	451.5	129.0
Ստեփանավան	4	3865.0	115.0	277.2	196.1	9	7880.0	45.3	270.9	108.3
Տաշիր								45.3	135.5	68.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	44	41248.0	270.0	2325.0	1081.7	232	206721.0	135.8	6772.5	1838.3
Եղվարդ	8	6360.0	1481.3	2375.1	1682.2	232	225888.0	135.8	6772.5	1964.5
Հրազդան	20	18600.0	253.0	636.0	429.5	41	38263.0	135.8	9030.0	1276.1
Շիրակի մարզ										
Ախուրյան	47	84459.9	277.2	4444.4	1708.6	15	11053.0	113.2	1535.1	328.6
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի						2	1666.0	67.9	180.6	98.6
Աշոցք						3	8600.0	40.8	135.5	57.7
Արթիկ	21	9556.0	24.3	859.0	310.4	7	5800.0	67.9	925.6	167.8
Սյունիքի մարզ										
Գորիս						3	2890.0	67.9	541.8	237.8
Կապան	6	3300.0	55.2	540.0	281.3	3	4348.0	67.9	632.1	203.6
Մեղրի	1	470.0	325.5	325.5	325.5	9	6950.0	67.9	406.4	121.4
Սիսիան						4	4330.0	67.9	406.4	139.7
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	2400.0	116.0	686.3	421.3	15	15225.0	67.9	1128.8	300.3
Վայք						1	1500.0	77.0	632.1	120.1
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	632.1	85.8
Իջևան	48	47037.0	76.0	1495.0	1360.6	41	42165.0	67.9	1354.5	423.9
Նոյեմբերյան	5	3661.0	69.0	447.1	399.6	5	6530.0	45.3	632.1	133.8

2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 5 գործարքներ 4.61 հա մակերեսով, ընդ որում 1-ը՝ Արարատի /0.10 հա/ և 2-ական՝ Գեղարքունիքի /0.10 հա/, Շիրակի /4.41 հա/ մարզերում:

2007թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3339 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.1%: Ընդ որում, վարձակալության գործարքների 39.1% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2007թ. չորրորդ եռամսյակում 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 30.8%-ով, իսկ 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 50.8%-ով:

2007թ. չորրորդ եռամսյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխության շարժն ունի աճի միտում:

2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 215 բնակարանների, 112 անհատական բնակելի տների, 1126 հասարակական և 116 արտադրական նշանակության օբյեկտների, 1743 միավոր /6882.93 հա/ հողերի և 27 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկելով են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 175 վարձակալության գործարքների, այդ թվում 39 միավոր /0.10 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 2.1 անգամ, իսկ 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ` 25.0%-ով:

2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 6882.93 հա հողերից 59.38 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 6823.55 հա հողերի 16.57 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 78.91 հա` հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում` 2766.90 հա, որից 2680.76 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1045.59 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. չորրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	3	275.41	21	84.67
Արարատ	2	46.23	38	253.67
Արմավիր	1	10.00	47	212.40
Գեղարքունիք	15	465.70	173	469.36
Լոռի	3	27.70	62	206.67
Կոտայք	2	130.00	76	154.78
Շիրակ	0	0.00	515	864.40
Սյունիք	13	88.10	42	2592.66
Վայոց Ձոր	2	2.45	33	526.42
Տավուշ	0	0.00	15	4.86
Ընդամենը	41	1045.59	1022	5369.89

2007թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7748 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 16.5%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 10.5%-ով, իսկ 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ` 77.9%:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.1%/, առանձնատների /25.5%/, հասարակական նշանակության օբյեկտների /9.9%/ և հողերի /14.4%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2988 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 5.4%-ով, իսկ 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ` 56.9%-ով:

2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 1367.17 հա հողեր, որից 21.45 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 90.0% կամ 1230.89 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.69 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 403.79 հա, որից 401.80 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 25 և 13 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 15.2%-ով, իսկ 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 32.1%-ով: 2007թ. չորրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների բարձր տոկոսաչափն արձանագրվել է 23.7% Երևանում, իսկ ցածրը՝ 2.6% Լոռվա մարզում:

2007թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 7694 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 10.2%-ով, իսկ 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 40.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /36.9%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն